

ԹԵՂՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԾԱՆՈԹ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ ԱԼԲԵՐՏ ԻՍԱՋԱՆՅԱՆԸ

Հողվածում ներկայացված է Սյունյաց գրական ընտանիքի ինքնատիպ դեմքերից մեկի՝ բանաստեղծ, արձակագիր Ալբերտ Իսաջանյանի գրական դիմանկարը: 1960-1980-ական թվականներին ստեղծագործած, բանաստեղծական երկու ժողովածուով («Ծաղիկ իմ հեռավոր», «Ծաղկե կամուրջ») և մեկ վիպակով («Ոչ, հայրիկ, ես մեծ բան եմ կորցրել») ընթերցողին ներկայացած գրողի բազմաթիվ ստեղծագործություններ(արձակ ու չափածո) դեռևս անտիպ են, որոնք հատկանշվում են գեղարվեստական որոշակի արժեքով և կարող են ամբողջացնել Նրա ուրույն դիմապատկերը: Այդ իմաստով Իսաջանյանի անտիպ գրական ժառանգության հրատարակումն ու արժևորումը մնում են հրատապ:

Բանալի բառեր՝ Ալբերտ Իսաջանյան, Սյունիքի գրական ընտանիք, բանաստեղծ, գրական դիմանկար, անտիպ գրական ժառանգություն:

Սյունյաց աշխարհը հայ գրականության պատմության մեջ մեծակշիռ ավանդ ունի: Սկսած պայծառանուն Ակսել Բակունցից, որ բարձրագույն արժեք է հայ մշակույթի պատմության մեջ, ծնունդով սյունեցի մյուս գրողները՝ Սերո Խանդավյանը, Սուրեն Այվազյանը, Համո Սահյանը, Գարեգին Սևունցը, Ալբերտ Իսաջանյանը, Սպարտակ Բակունցը, Էդուարդ Չոիրաբյանը, Քաջիկ Դորունցը, Ժամանակակիցներից Գագիկ Դավթյանը, Արկադի Ծատուրյանը, Տիգրան Գրիգորյանը, Լևոն Սահակյանը և ուրիշներ, իրենց ստեղծած գեղարվեստական արժեքներով հարստացրել և հընթացս հարստացնում են հայ գրական կյանքը: Խոսքը ստեղծագործական մի ուրույն տարածքի՝ Սյունիքի գրական ընտանիքի մասին է, որի շատ ներկայացուցիչներ դեռ ըստ ամենայնի ուսումնասիրված ու արժևորված չեն:

Սյունյաց գրական ընտանիքը մեզ համար ապրում ու շնչում է նաև Ալբերտ Իսաջանյանի՝ 1960-1980-ականներին ստեղծագործած բացառիկ օժտվածությամբ գրողի ստեղծագործություններով: Բանաստեղծ ու արձակագիր, որ հայ գրականության, մասնավորապես քնարերգության մեջ պետք է գրավի իրեն վերապահված տեղը: Այս իմաստով Իսաջանյանի ստեղծագործության վերագնահատումն անխուսափելի է ու հրատապ:

Անհնար է գոնե մեկ անգամ, թեկուզ հպանիցիկորեն ընթերցել Ալբերտ Իսաջանյանի բանաստեղծությունները, առնչվել կյանքի սրտառուչ էջերին և անտարբեր անցնել: Իսաջանյանն իր բանաստեղծություններում առկա զարմանալի գրգիռներով պարտադրում է ներքին զրույց սկսել իր հետ, հուզվել ու խորհել, այլ խոսքով՝ երբեք չմոռանալ իրեն, չհեռանալ իրենից: Առանձնահատկություն, որ խոսում է բանաստեղծ-գեղագետի ինքնատիպ ու առլեցուն ներաշխարհի, Նրա գրչով պոեզիա բերվող բառապատկերային յուրատիպությունների մասին:

Մահից գրեթե չորս տասնամյակ անց Իսաջանյանի կենդանի կերպարը

վառ է մնացել սերնդակիցների հիշողության մտապաստառին, իսկ մերօրյա գրասեր հանրության համար նրա «կյանքի ու գործի հեքիաթը» (Հակոբ Օշական) ոչ միայն չի մարում, այլև շարունակում է բորբոքվել նոր ուժով:

Դժվարին մարդկային ճակատագիր բաժին հասավ Իսաջանյանին, բայց նա կարողացավ ոգու տոկոսնությամբ, հայացքի անթեքությամբ ու շիտակությամբ անցնել հավատի ի՛ր ճանապարհը և գտնել իր որոնածը յուրովի: Իսկ կյանքի գուներանգները, որոնք բացահայտեց որպես բանաստեղծ, միանգամից ձևավորում են հեղինակ-ընթերցող այնքան ըղձալի կապն ու տանում նրա հոգու ծաղկանկար աշխարհը...

Ինչպես օրագրային նոթերում, հարյուրավոր նամակներում, այնպես էլ ստեղծագործություններում Իսաջանյանը «ժլատ» է իր կենսագրություն-տառապանքի էջերը մատուցելիս: Ներհուն ընթերցողը կսկիծով է առնչվում դրանք անընդհատ չքրքրելու՝ գրողի ցավագին մտատանջությանը:

Ծնվել է 1937 թվականին Գորիսի շրջանի Քարահունջ գյուղում: Աշխույժ և ուշիմ պատանին, ավարտելով գյուղի յոթնամյա դպրոցը, փոխադրվում է Գորիսի միջնակարգ դպրոց և, պատանեկան երազներով տոգորված, պատաստվում ուռը դնել նոր կյանքի շեմին: 1953-ի ամռանը, սակայն, ճակատագրական դաժան անկյունադարձը, պատահականության դժնի ձեռքը մխրճվում են նրա կյանքում: Ուժգին քամու հետևանքով խճճվել ու կտրվել էին հարևանի տան էլեկտրական լարերը: 16-ամյա Ալբերտը բարձրանում է պատշգամբի սյան վրա, միացնում լույսը և լարերն իրարից անջատելու պահին սայթաքում ու ընկնում: Ի՛նչ իմանար ազնվասիրտ պատանին, որ օգտակար լինելու մղումը անձնական դժբախտության է վերածվելու, տանելու է դեպի անելանելիություն, մահվան ու գոյության սահման: Հանկարծակի ու անսպասելի՝ նա ցմահ գամվում է անկողնուն, զրկվում շարժվելու, դպրոց հաճախելու, լիարժեք կյանքով ապրելու հնարավորությունից: Սկզբում չէր կորցնում հույսը՝ ինքն էլ չընդունելով ճակատագրի չար խաղը: Մայրը կուլ էր տալիս արցունքներն ու անվերջ հուսադրում: Մարդ արարածին երբեք չլքող հույսն էր ներարկում որդու մեջ, հույս, որ աննկատ կամուրջ էր կապում կյանքի շարունակականության հետ, ծաղկասերմեր ցանում մատղաշ հոգում, որոնք հետո պիտի բացվեին ու ծաղկաշղթայի պես կամրջեին նրան կյանքի սիրո հետ, ուժ տալին ապրելու, արարելու: «Շատերը / եկան, /Գնացի՛ն/ Անցա՛ն,/ Սիրելի՛ մայրիկ,/ այդ դու ես նորից/ Իմ անքուն,/ անտուն/ սրտից/ անբաժան,/ Իմ խինդին / ընկեր,/ վշտին՝/ կարեկից»¹:

Ծանր ու տխուր մտածմունքների մեջ հայտնված հարազատները, հաշվի առնելով Ալբերտի ընդունակությունները մաթեմատիկայից, խորհուրդ են տալիս հաշվապահություն սովորել: «Բայց ես մտածեցի,- խոստովանել է մանկավարժ ու գրասեր մայրը,-որ նրա փրկությունը գրականության մեջ է, և որ պետք է նրան կապել գրքին»: Ի՛նչ ուժ ու կամք պիտի ունենար հասունության շեմին գտնվող պատանին, որ դիմանար ու մաքառեր, յուրատեսակ վերածնունդ ապրեր գրական աշխատանքի մեջ:

Տառապանքին դիմանալու համար Ալբերտը գիրք ու գրիչ է վերցնում, երգ է ծնվում նրա հոգում, բայց դեռ հեռու էր ինքն իրեն գրականության մեջ տեսնելու մտքից:

¹ Իսաջանյան Ա., Ծաղկե կամուրջ, էջ 58:

... Մոլորվել եմ,
Ու ցավում է սիրտս նորեն,
Կրծքիս խորքում ե՛րգ է ծնվում
հավանորեն:

Սիլվա Կապուտիկյանի միջնորդությամբ Իսաջանյանը էքստենզիոն հանձնում է ավարտական քննությունները և ստանում միջակարգ կրթության վկայական: Այնուհետև Իսաջանյանների ընտանիքը տեղափոխվում է Գորիս:

Յուրատեսակ սերը դեպի գրականությունը Ալբերտին մշտապես կապում է գրչին ու գրական կյանքին: Անընդհատ կարդում էր, ինքնաշխատությամբ ընդարձակում մտահորիզոնը, մաքառում դժի հիվանդության ու հուսահատության դեմ, փորձում ուժ գտնել՝ սիրելու կյանքը, օգտակար լինելու նույնիսկ այդ վիճակում, ինչ-որ բան տալու աշխարհին, զարդարելու այն. «...*Բայց սիրտ իմ, / փորձիր այս / դեղձենու պես/թեկուզ քիչ բանով մի բան/զարդարել*»¹, - դիմում էր սրտին: Այդ ներքին պայքարը, կյանքին օգտակար լինելու ձգտումը արտահայտվել են բազմաթիվ բանաստեղծություններում. «*Ծանր չէ, կանցնեն օրերս /ջահել/, Բայց անցնեն այնպես, / որ չասեմ/ կորան...*»²:

Գրական մուտքը չի ուշանում: 1960 թվականին «Ավանգարդ» օրաթերթում հրապարակվում են 23-ամյա Իսաջանյանի բանաստեղծությունները՝ «Հանդիպում երիտասարդ ստեղծագրծողի հետ» խորագրով: Այնուհետև թերթի հայտարարած գրական մրցույթին Իսաջանյանի «Դեղձենին» բանաստեղծությունը շահում է գլխավոր մրցանակը: Նրա անունը սիրելի ու սպասված է դառնում գրասեր հանրության շրջանում:

1965 թվականին Իսաջանյանը ընթերցողին ներկայանում է անդրանիկ ժողովածուով՝ «**Ծաղկե կամուրջ**» խորհրդանշական խորագրով: Հատկանշական է, որ երիտասարդ բանաստեղծի ձիրքը նկատել, գրական նախաքայլերը ողջունել է անվանի արձակագիր Սերո Խանգադյանը՝ սրտառուչ առաջաբան հեղինակելով «Ծաղկե կամուրջ» ժողովածուի համար՝ «Պատանի պոետը» խորագրով: «*Ալբերտ Իսաջանյանին ես հանդիպեցի մի երկու տարի առաջ, աշնանը, - գրում է Խանգադյանը. - Գորիսի շրջանի Քարահունջ գյուղում՝ իրենց տան պատշգամբում պառկած: Նա չկարողացավ բարձրանալ տեղից: Նա գամված էր անկողնուն: Կույր դիպվածը վրա է հասել, երբ նա տասնվեց տարեկան աշխույժ և ուշիմ պատանի է եղել: Հարևանի կտրված լույսը կապելու ժամանակ ընկել է էլեկտրական սյունից և...գամվել անկողնուն: Ալբերտը շատ ընթերցող, շատ լիրիկական սրտի տեր տղա է: Անկողնում անշարժ պառկած՝ նա մեծ տուկունություն մաքառում է դժբախտության դեմ, վանում աղետի պատճառած հուսալքությունը: Նա բռուն է սիրում կյանքը, հայրենի բնությունը, երկնքի կապույտը, որը թեև պատուհանի անցքից է տեսնում միայն, բայց կարծես ապրում է նրա հետ, նրա շնչով: Նա բանաստեղծի հոգով է զգում ծաղիկների բույրը, յուրովի տեսնում հայրենի լեռնաշխարհի գույները, նրա սքանչելի պատկերը՝ ծաղկած բալենիներ, սպիտակ ժրվեժներ, զարնան զարթոնքը, աշնան բոցկլտացումը և դրանց մեջ բողբոջած իր առաջին սերը՝ իր հեռու սերը՝ ջինջ աղբյուրի ակունքի պես և երագուն՝ ինչպես երկնքի հեռավոր լազուրը: Ոչ մի պահ Ալբերտը չի կորցնում իրեն, չի նվնվում: Նրա լիրիկան նուրբ է, ցողաթաթախ,*

1 Նույն տեղում, էջ 7:

2 Նույն տեղում, էջ 33:

պատանեկան ջերմությամբ: Դրանք միշտ լավատես, միշտ ապրող, բաբախող սրտի թրթռներ են, դրանք արևին ու կյանքին կառչած, դժբախտությունն արհաբար հաղթահարող մարդու երգեր են: Այդ երգերի մեջ ջերմություն ու վարակիչ քնքշանք կա: Իսաճանյանի բանաստեղծությունները հաստատում են կյանքը, վանում հուսալքությունը, աղետը: Նա հավատում է կյանքին, ցնծությամբ ընկալում նրա գեղեցկությունները: Եվ դա նրա՝ այդ պատանի պոետի, ասել է նաև նրա սերնդի հոգեկան արիության մեծ վկայականն է:

Ես սիրով կազմեցի, խմբագրեցի Իսաճանյանի բանաստեղծական այս համեստ ծաղկեփունջը, ողջունելով նրա աշխարհ գալը: Հավատացած եմ, որ այդ ծաղկեփունջը հաճույք ու բավականություն կպատճառի շատ ընթերցողներին»¹:

Գիրքը սպառվում է անմիջապես: Այն վճռորոշ դեր է խաղում Ալբերտի կյանքում: Նամակ նամակի հետևից, գնահատություն գնահատության հետևից: Ամենատարբեր վայրերից, ամենատարբեր տարիքի ու զբաղմունքի տեր մարդիկ գրում էին Ալբերտին նույն ոգով, նույն հիացմունքով. «Սիրելի՛ Ալբերտ, սիրեցի երգերդ, սիրեցի քեզ, ապրե՛ս, շա՛տ ապրես»: Բանաստեղծի սրտից ընթերցողի սիրտը տանող «ծաղկե կամուրջ» վավերացվում է հենց առաջին գրքով, նրա պարզևած սիրո, հույսի ջերմ ալիքով.

*... Այս լավ օրերի ծփուն հորձանքում,
Երգ իմ, կարոտ իմ, ճամփադ չջեղես,
Այնպես շշնջա՝ չկորչես կյանքում,
Ու սրտիս մի նոր կսկիծ չբերես:
Սիրտս չկտրես արար աշխարհից,
Երգ իմ, կամուրջ իմ, խախտտ չլինես...²*

Իսաճանյանին շատ էր մտահոգում վախը, որ կարող է զուր անցնել կյանքը՝ մնալով «սևագիր»: Ուզում էր անպայման օգտակար լինել մարդկանց, քանի դեռ սրտի կրակը չէր հանգել. «Այրեմ հույզերս,/ քանի դեռ տաք են,/ Կարոտս այրեմ մարդիկ տաքանան...³

Երգը, որ աշխարհի ու մարդու միջև կամուրջն էր, որքան անձնական, այնքան էլ անանձնական էր.

*Երբ կաքավում են, սահում են կողքիս
Երազ աչքերով ջահել զույգերը,
Ազնիվ խոսք, այնքա՛ն հուզվում է հոգիս,
Ուրիշի բախտով տաքանում եմ ես...
Եվ դրա համար սիրտ իմ, ընկեր իմ,
Շնորհակալ եմ քեզանից այնպես...⁴*

Տաքանալ ուրիշի բախտով – ահա մարդկային բարձրագույն զգացողությունը, որ, ակունքվելով թումանյանի կենսափիլիսոփայությունից, հավատամբ է դառնում Ալբերտ Իսաճանյանի պոեզիայում: Կրած տառապանքները չեն կարողացել գորշ կնիք թողնել բանաստեղծի հոգեաշխարհում, ցավի պրկումից նրա հայացքը չի պղտորվել, չի կարծրացել նուրբ ու զգայուն սիրտը: Իսաճան-

1 Նույն տեղում, էջ 3-4:

2 Նույն տեղում, էջ 9:

3 Նույն տեղում, էջ 38:

4 Նույն տեղում, էջ 34:

յանի բանաստղերում առողջ ու կենսասեր ոգի կա, նա ցավից չի գրում, այլ չասվածն ասելու, դրանով իսկ կյանքը գեղեցկացնելու, հարստացնելու ցանկությունից, գրում է, որովհետև չի կարող չբացել հոգու ծաղկաթերթերը, չհաղորդվել կյանքի սիրո հետ, չապրել սիրո կյանքով.

*Կարծում ես՝ ցավի՞ց եմ երգում,
Ցավից է մրմունջս գալիս,
Կսկի՞ծ է, կարծում ես, ներսում,
Կրծքիս տակ աշունն է լալիս...
Չասվածը ասե՛լ եմ ուզում,
Չբացված թերթերս բացել,
Թե թաց են հույզերս հասուն,
Այդ գարնան շաղերն են թացել:
Կարծում ես՝ ցավի՞ց եմ լացել... ¹*

Իսաչանյանը հաճախ է դիմում բնապատկերներին, որոնք երբեք ինքնանպատակ չեն: Դրանք բազմերանգորեն վերստեղծելով բնության գեղեցկությունները՝ միաժամանակ բանալի են դառնում թափանցելու բանաստեղծի հոգու ծալքերը, բացահատելու անթեղած խորհուրդները: Առանձին հմայք ունեն Իսաչանյանի՝ հայրենի գյուղին, մանկության հուշապրումներին նվիրված բանաստեղծությունները, որոնք հյուսված են լուսաթրթռ կարոտից, կյանքի սիրուց ու հանկարծահաս ցավից: Հայրենի գյուղը համեմատվում է թախիծը վանող, սնուցանող մայրական գրկի հետ և ոչ միայն.

*Կյանքիս բարի՛քն է հայրենի գյուղս,
Իմ հույս-գալիքն է հայրենի գյուղս,
Մատաղ իմ սիրո ու երազների
Հորդուն ալի՛քն է հայրենի գյուղս²:*

«Ձմեռ է գալիս...» բանաստեղծության մեջ բանաստեղծն իր սրտի կրակով հալեցնել է ուզում ձյունները, որ իր «վարդ կարոտները» չցրտահարվեն. նրանք դեռ անելիք ունեն, պիտի տաքացնեն մարդկանց սրտերը: Վերհուշերում հաճախ արթնանում են մանկության հետ կապված դառնաթախիծ դրվագներ, որոնք բանաստեղծը վերարտադրում է հենց մանկության «աչքերով», մանկան անբիծ ու անգիտակ «ժպիտով».

*Տխուր տարի է ծնվել ժպիտս,
Ձմռան ամալի պես անբիծ է եղել
Ու ոչի՛նչ, ոչի՛նչ չէի հասկացել,-
Դրանից է, որ մայրս լացել է,
Իսկ ես՝ ժպտացել...
Հետո, երբ մի քիչ թմբլիկացել եմ,
Հասկացել եմ, որ չկա հայրիկը.
«Վատ մարդ է եկել, միայն լսել եմ,-
Գնացել է որ... որ վախեցնի».-
Ու վախեցել եմ՝ ժպիտը շուրթիս...
Հետո հասկացա, որ էլ չի գալու.
«Ախ, ետ գար էլի՛,*

¹ Նույն տեղում, էջ 37:
² Նույն տեղում, էջ 14:

*Ոչինչ չբերեր, ետ գար հայրիկը»:
Ու մթնդել է ժպիտը շուրթիս.*

Հասկացող ժպիտ:

Հասկացող ժպիտ:

*Բայց չհասկացար, որ կյանքում նաև
Մայրիկներին էր «հայրիկ» հարկավոր.
Մի պաղ երեկո շուրթս համբուրեց,
Գնաց մայրիկս «ուրիշ հայրիկի» -
Ես ծվարեցի իմ տատի կրծքին,
Իսկ իմ ժպիտը գունատվեց շուրթիս...¹*

Այս պարզ ու անկեղծ տողերում մարդկային խոր ջերմություն կա, որ չի կարող չփոխանցվել ընթերցողին: Իսաջանյանի պոեզիայում հստակ արտահայտված գեղագիտական ընդգծումներով անձնավորվում են կշենին, բալենին, խնձորենին, հոնին, աղբյուրը, իրիկունը, աշխարհում դեռ «բույն չհինած հավքը»...

«Հողմի դեմ քնքշությամբ հառնած» կշենին հենց ինքն է.

*Կշենի՛, դարերով զատվա՛ծ անտառից,
Անտառը ցածում էր, դու՛ ժայռի վրա,
Բայց էլի ապրել ես և խռով բախտից,
Թվում է՝ ժպտացել, հեզնե՛լ ես նրան՝²*

Իսաջանյանի պոեզիան նախ և առաջ ինքնապատում է՝ կյանքի սահանքներով, ճակատագրականության բեռով, մանկության ու պատանեկության հուշապատկերներով, մենության ու անձկության, նաև՝ սիրո անփոխադարձության տագնապով: Բնության մեջ է նա որոնում իր ապրումների ու զգացումների համարժեքը, սպեղանին, ինքնարտահայտվում, ստեղծում իր գեղարվեստական ուրույն համակարգը:

Իսաջանյանի պոեզիայի մի առանձին բույլը մեծերին՝ Կոմիտասին, Վահան Տերյանին, Ակսել Բակունցին, Համո Սահյանին, Եղիշե Չարենցին(անտիպ), Պարույր Սևակին ընծայագրված բանաստեղծություններն են, որոնք և՛ բնութագրական, և՛ գնահատողական բնույթ ունեն: Իսաջանյանի կյանքում հատկապես մեծ դեր է խաղացել Պարույր Սևակը, որ շատ բարձր է գնահատել նրա պոեզիան և օգնել նորահայտ բանաստեղծին ինքնահաստատվել: Ուշագրավ են նրանց ծանոթության մանրամասները: 1964 թվականին, երբ Սևակը Բաղիշ Հովսեփյանի և Արտաշես Քալանթարյանի հետ գտնվում էր Գորիսում, մի երեկույթի ժամանակ պատահաբար լսում է Իսաջանյանի մասին և ցանկություն հայտնում ծանոթանալու տաղանդավոր բանաստեղծի հետ: Այդպես հյուսվում է նրանց մարդկային ու գրական սերտ բարեկամությունը, ինչը հետագայում ամրապնդվում է նոր հանդիպումներով Երևանում, ուղեկցվում փոխադարձ վստահության ազնիվ զգացումով, հաստատվում ջերմ նամակագրությամբ: Օժտված բանաստեղծի, արձակագրի ստեղծագործական ճակատագրով մտահոգ՝ Պարույր Սևակը ամեն կերպ օգնել է նրան ինքնահաստատվել գրական կյանքում, ներկայանալ գրական հանրությանը: Պահպանվել է Սևա-

¹ Նույն տեղում, էջ 45:

² Նույն տեղում, էջ 16:

կի՝ Իսաջանյանին հասցեագրած նամակներից մեկը (ցավոք, ոչ բոլորը), որը գրված է հապճեպ՝ «Հայաստանի սովետական գրողների միության վարչության քարտուղար» պաշտոնաթղթի վրա՝ թվագրված 15.11.1968թ.: «Ալբերտ ջան: Իսկույն և եթ խոսեցի գործերիդ մասին: Տպագրում են վիպակդ, որ շատ են հավանել և ասում են, որ այդ մասին արդեն գրել են քեզ: Ուրեմն կարող ես չանհանգստանալ: Բանաստեղծություններիդ, չգիտեմ ինչու, ավելի պակաս են հավանել, բայց դե կարևորություն մի տուր դրան: Ժողովածուդ թարմացնելով փոքր-ինչ կտպես հաջորդ անգամ: Անտանելի գրադված եմ, ուստի և կարճ եմ կապում: Հետևիր առողջությանդ և պայծառ մնա, սիրելիս: Համբուրում եմ քեզ: Քո Պարույր: 15.XI.68 Երևան: Հ.Գ. Խմբագիրդ է Վոլոդյա Դանիելյանը: Խելոք տղա է, եթե դժվարությունների հանդիպես, ձայն տուր, սիրով կօգնեմ: Պ.»:

Նամակում Սևակը ակնարկում է Իսաջանյանի «Ոչ, հայրիկ, ես մեծ բան եմ կորցրել» վիպակի մասին, որը լույս է տեսել 1971 թվականին: Պարզ է, որ Սևակը հետաքրքրվել է վիպակի տպագրության հանգամանքներով ու տեղյակ պահել Իսաջանյանին: 1965-ին արդեն լույս էր տեսել Իսաջանյանի «Ծաղկե կամուրջ» բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, և ենթադրելի է, որ Սևակը նամակում ակնարկում է 1977 թվականին լույս տեսած «Ծաղիկ իմ հեռավոր» բանաստեղծական ժողովածուի մասին:

Իսաջանյանը Սևակին նվիրել է երկու բանաստեղծություն, որից մեկը անտիպ է: Ծանոթության օրն ուրախությամբ իրազեկվելով, որ Ալբերտը մեքենայով երբեմն շրջագայում է, Սևակը խնդրում է այցելել Չանախչի՝ իր հայրենական տուն: Ալբերտը Սևակի ծննդավայր է այցելում յոթ տարի անց, ցավոք, ոչ թե հյուրընկալվելու բանաստեղծին, այլ մասնակցելու հուղարկավորությանը: Կորստի ցավից էլ ծնվում է Իսաջանյանի հուզառատ բանաստեղծություններից մեկը՝ նվիրված հոգեկից ընկերոջը.

*Ասացիր՝ ե՞րբ ես գալու իմ տունը,
Ասացիր՝ կգաս պատեհ-անպատեհ,
Քնած կլինեմ, թե հարբած՝ կգաս,
Ցավիդ դեմ ի՞նչ են փառքս, անունս:*

*Ասում եմ՝ եկա, ետ տար դռներդ,
Ճաք տված հողիդ վրայով արի
Եվ պարզիր, զուլա՛յ,
Եվ պարզիր, անդիրտ
Ճաք տված ճամփիս արդար կոներդ:*

*Եկ, անծանոթ եմ... ու սիրտս էրած
Չի հաշտվում ախար քո լռության հետ,
Այս բազմության մեջ
Դու իմ միակը,
Մեն-մտերիմը ու դու էլ՝ մեռա՛ծ...*

*Ու որբությունս ծորում է հողիդ,-
Ես ուրիշ հողում ասելիք չունեմ,*

*Հիմա ճիշտ-ճշգրիտ, հիմա արդարև
Նման է, Պարույր, իմ ցավը քննիմ¹:*

Հատկանշական է 1977 թվականի օրագրային մի գրառումը, ըստ որի՝ Իսաջանյանը մտադրություն է ունեցել Սևակին նվիրված լայնակտավ գրական երկ ստեղծել, որը չի իրագործել: «Մտածում եմ, որ երբևէ պետք է սկսեմ վեպը կամ, չգիտեմ ինչ անուն տամ, երբևէ պետք է սկսեմ գրել այդ անանուն բանը, որը խլրտում է ինձանում... »:

1965-ից մինչև 1977 թվականը Ալբերտ Իսաջանյանը պոեզիայում առերևույթ լուրջություն պահպանեց, եթե չհաշվենք մամուլում հրապարակված առանձին բանաստեղծությունները: Իսաջանյանը ինքնախորասուզման, ստեղծագործական հասունացման ճանապարհին էր, և այդ որոնումները ծնունդ տվեցին նորորակ գեղարվեստական գործերի:

Բանաստեղծական հայտածումներին զուգահեռ ձևավորվեց արձակը: 1971 թվականին «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց Իսաջանյանի «**Ոչ, հայրիկ, ես մեծ բան եմ կորցրել**» վիպակը: Եվ սակայն, ինչու² վիպակ և ոչ բանաստեղծությունների նոր ժողովածու: Այդ մասին գրառում է արել հենց ինքը. «Մեր ոսկեդենիկ Եղիշեի խոսքն ինձ շատ է տպավորել. «Բազում այն են, գոր ոչ գիտեմ, քան թե գիտիցեմ»: Համեստություն չէ, երևի մեծ օրինաչափություն է. որքան շատ բան ես իմանում, այնքան շատանում է չիմացածը: Եվ հետո, ուզում եմ բանաստեղծությունների նոր ժողովածուս հնարավորին չափով, իհարկե, իմ հնարավորությունների, նորություն լինի ընթերցողներիս համար: Հրատարակվող վիպակս արձակով առաջին հանդիպումս է լինելու: Երկրորդ հանդիպումը, իմ կարծիքով, ավելի կարևոր է և պատասխանատու»²:

Արձակում Իսաջանյանը կյանքի ճշմարտությունները մատուցում է առանձին ու պարզ գույներով, արտաքուստ անգամ կենցաղային թվացող հանդերձանքով: Նա լավ գիտի, որ բարձրագույն, բարդ դատումները, ենթամատային խտացումները, աղմկոտ բարոյախոսությունը հաճախ վնասում են պատումը, թուլացնում կենդանի կյանքի երակը, ուստի ընտրում է մի այնպիսի ոճ, որը սրտամոտ է ընթերցողին, առավել ևս, որ վիպակի գլխավոր հերոսը երիտասարդության սեմին ոտք դրած ռոմանտիկ անձնավորություն է՝ համալսարան չընդունվելու առաջին ձախողությամբ, փոթորկահույզ առաջին սիրով, իր միջավայրի ու ժամանակի հանդեպ դրսևորվող բազմազեղուն ու հակասական խոհերով, երազի և իրականության բախման անխուսափելիությունից ծնված հուսալքությամբ: Կյանքն իրական բովանդակությամբ վերարտադրելու սկզբունքը Իսաջանյան արձակագրի առանձնաշնորհներից է:

1973 թվականին Ալբերտ Իսաջանյանը դառնում է Գրողների միության անդամ: Նա ապրում էր գրական լիարյուն կյանքով, տպագրվում տեղային ու հանրապետական գրական մամուլում, վայելում հանրային-ընթերցողական ջերմ արձագանքներ թե՛ նամակների, թե՛ մամուլի անդրադարձների տեսքով: Առինքնող խոսքի տեր բանաստեղծը երևում է հեռուստացույցի Էկրանին, ռադիոլսողները առիթ են ունենում ունկնդրելու նրա ձայնը, հայտնի բանաստեղծներից շատերն անձնապես ծանոթանում են նրա հետ, ձևավորվում ու ամրանում են գրական կապերը: Ժամանակակիցները վկայում են, որ Իսաջանյանի

1 **Իսաջանյան Ա.**, Ծաղիկ իմ հեռավոր, Ե., 1977, էջ 7:

2 Արխիվային գրառում:

տունը դարձել էր Գորիսի գրականասեր մտավորականության հավաքատեղին, յուրատեսակ մի «վերնատուն»: Գրականագետ Նինա Հովսեփյանի ղեկավարությամբ գործող «Միրիադ» գրական խմբակն իր հանդիպումներն ու քննարկումները հաճախ անցկացնում էր բանաստեղծի հարկի տակ: Իսաջանյանի հետ հանդիպելու, գրուցախոսելու, գրական ու մարդկային ջերմ հաղորդակցության էին ձգտում քաղաքի գրասեր երիտասարդները, արվեստագետները, սկսնակ գրողները, իր պոեզիայի երկրպագուները: Բնատուր աշխատասիրությամբ օժտված Իսաջանյանը անընդհատ ընդարձակում էր իր հետաքրքրությունների ու ճանաչողության շրջանակները, անհագորեն ընթերցում հայ և համաշխարհային գրականության դասականներին, հետևում գրական անցուդարձին, բանավեճերին: Այդպես նա վերանայում է իր անցած ուղին, «Ծաղկե կամուրջ»-ում զգում ինչ-ինչ ազդեցություններ, համակվում 1970-ականների հայ պոեզիայի գրական որոնումներով, վերանայում գեղարվեստականության իր չափանիշները՝ ավելի հասուն ու բարձրարվեստ ներկայանալու ընթերցողին:

1977թ.-ին լույս է տեսնում Իսաջանյանի երկրորդ բանաստեղծական ժողովածուն՝ «**Ծաղիկ իմ հեռավոր**» խորագրով: Ժողովածուն աչքի է ընկնում լեզվի, ոճի, պատկերների շքեղությամբ, կյանքի ըմբռնումի ու մտածումի խորությամբ: Հավատարիմ դասական բանաստեղծական ձևերին՝ Իսաջանյանը նաև նորարարության ձգտում ունի, սակայն զուսպ, զգույշ ու չափավոր: Նա հեռու է արտառոցություններից, բառախաղացություններից, մի ցավ, որով այսօր շատ գրողներ են տառապում ու տառապեցնում ուրիշներին:

Երկու ժողովածուների միջև գոյություն ունի հղացման ընդհանրություն՝ սկսած խորագրից: Իսաջանյանի գերզգայուն հոգին նրբորեն ընկալում և ապա խոսքավորում է մի ամբողջ կյանքի պատմություն, այրվելով լույս տվող ու սպառվող մարդու հոգու կենսագրություն: Իր «դառն ու ուրախ» հուզապրոնների շիճուկի մեջ ձուլված են մտքի իմաստությունները՝ պարուրված լուսավոր թախիծով:

*Ինձ ճանաչելուց առաջ իմ խոսքը
Երկուսը եղավ՝*

Ուրախ և դառը:

*Ինձ ճանաչելուց հետո իմ խոսքը
Երկուսը եղավ՝*

ուրախ և դառը:

*Անգամ իմ տառապանքի խոսքը
Երկուսը եղավ՝*

ուրախ և դառը:

*Հողմը բերում է սուրհանդակի պես
Իմ հեռացումի*

դողանջն է փռում՝

ուրախ և դառը¹:

Իսաջանյանը հրաշալիորեն տիրապետում է խոսքի գեղագիտության նրբերանգներին: Ընթերցողին փարվում է մաքուր պոեզիայի ալիքը և ինքնարտահայտման բնականությունը: Բանաստեղծը կարողանում է հաղորդվել բառի ներքին իմաստային հմայքին, ելքավորել ապրումները բանարվեստի

¹ **Իսաջանյան Ա.**, Ծաղիկ իմ հեռավոր, էջ 10:

մաքրագործող ուժով: Հոգու կենսագրապատումի գլխավոր երակը սիրո ապրումն է, որ դարձյալ հիշողության մղումով օրորում է նրան, քանզի «հուշը չի կարող ծածկվել գորշության քողով»։ «*Ես մի աղջիկ եմ սիրել երբեմնի, / Առաջին սիրո անաղարտությամբ, / Եվ ոչինչ չի փոխվել այն օրվանց, / Ոչինչ չի փոխվել-*»¹: Որպես տեսիլապատկեր՝ Իսաչանանի պոեզիայում կարմիր թելի պես անցնում է «հեռավոր փթթումի հարսնությամբ օրորուն» իրիկնամուտի ուրու-ւ-աղջիկը և ստեղծում տերյանական տրամադրություններ. «*Այսօր թաղվել են մշուշի մեջ ցուրտ / Աստղ ու երկինք.- / Տաքացրու ձեռքերս, / Ինձ սիրահարված աղջիկ: / Եվ եթե այսօր նկարելու ես ինձ, - / Նկարելուց առաջ / Տաքացրու ձեռքերս, / Ինձ սիրահարված աղջիկ*»²:

Այս ժողովածուում նույնպես քնարական հերոսի կերպարը ձուլված է բնաշխարհին: Բնության երևույթներով բանաստեղծն արտահայտում է մարդկային համարժեք հուզապրումը, հոգեվիճակը, կյանքն ընկալելու կերպն ու զգայական ներհայեցումը:

*Ամեն ինչ փխրուն է դառնում
Իրիկնամուտի դողդոջ պահին,
Գույներս իրար են խառնվում
Օրորվում են իմ լքված գահին:*

*Խնկվում են ջրերիս կողքին,
Ամպերիս վրա լեռնակուտակ,
Իրարից շիկնում են արդեն
Իմ ծաղիկներս ծուռ ու շիտակ:*

*Փրթվում են իրարից թաքուն,
Անանուն հավքի թևերի տակ,
Իզուր ես ինձ ձեռքով անում,
Իրիկնամուտի աղջիկ իմ տաք*³:

«Ծաղիկ իմ հեռավոր» ժողովածուում Իսաչանյանի պատկերներն ավելի խորհրդանշային բնույթ ունեն: Ակնհայտ է ինքնասուզում-բյուրեղացումը, հուզապրումների իմաստնացումն ու պտղավորումը արդեն «աշնանային թանձրությամբ»: Առհասարակ, պատկերավորման համակարգը Ալբերտ Իսաչանյանի գինանոցն է.

*Պտղավորվում է իմ սիրտը այսօր
Թանձրությամբ աշնան,
Հայրենի երկրի երկինք,
Եվ ծառ ու ծաղիկ հայրենի երկրի:
Ի՛նչ թանձր է աշունդ ու պաշտելի,
Ի՛նչ թանձր է աշունդ դեղին*⁴:

Իսաչանյանն ունի պապին կենդանագրող մի փոքրիկ, նրբաիյուս բանաստեղծություն, որ շատ է հիշեցնում Սահյանի Խաչիպապին՝ իր բարոյաբանությամբ ու աշխատասիրությամբ: Այստեղ ծորում է մանկության կարոտը,

1 Նույն տեղում, էջ 15:

2 Նույն տեղում, էջ 11:

3 Նույն տեղում, էջ 14-15:

4 Նույն տեղում, էջ 6:

որն արտահայտվում է պատասխան չանկնկալող փիլիսոփայական հարցումի շեշտով.

*Իմ ցորնաբույր և խորնաբույր
Պապս կգա՞ մանգաղն ուսին,
Եվ մանգաղի կանաչ ծայրին
Ես կգտնե՞մ
Կանաչ ցողուն եղինջների: -*

*Իմ կարտած երինջն էլի
Բաց դարպասից կտուրա՞ ներս
Վախեցնի ինձ,
Եվ կգրկի՞ պապս շաղոտ,
Եվ կսրբի՞ աչքերս թաց. -*

*Կանա՛չ, կանաչ մատների մեջ
Կանաչ խնձոր կտա՞ նորից...¹*

Իսաչանյանի բանաստեղծություններում բառերը հաճախ ազատվում են բուն իմաստներից և այլորեն, գերխիտ թանձրացումներով արտահայտում հուզապրումները.

*Ծաղիկներն անձայն ծերացան ձորի կամարի տակ,
Եվ դու ու՞մ համար հոգստո-հոգևոր երկինք դարձար
Եվ արժանավոր՝ ու՞մ բախտի վրա ծաղկած ծառի:
Լուսնահամ երկինք ծամեցիր նորից և ծովի ջուր,
Եվ առաքինի կորած ես նորից,
Եվ առաքինի կեղծիք է նորից,
Թե խխունջի պես կարձակվես դու դեռ եզրատողում: -
Գնա և ձորում ժայռ լցրու վերքիդ տարիքավոր
Եվ, տես, ինչպես են խխունջներն անձայն և խելացի,
Եվ խոնա՛վ, խոնավ ծերանում ձորի կամարի տակ...²*

Բանաստեղծական գյուտերի շտեմարան է «Ծաղիկ իմ հեռավոր» ժողովածուն, որ հնարավորություն է տալիս ըմբռնելու ու զգալու բանաստեղծի հոգին՝ խորունկ մտասուզումների, ինքնատիպ մետաֆորների ու բառապատկերների հանդիսարանը. օրինակները բազմաթիվ են՝ հուռուրթ-խոսքեր, երազանքների շոգ ծիծաղներ, շոգ լուռություն, հոգնած կարոտ, քնար աղջիկ, անհողմության ոսկի ծովեր, ցորնաբույր ու խորնաբույր պապ, ջրվեժի նման աղջիկ, ծեր ու ոլորվող տապ, քնարածայն գեղգեղանք, իրիկնամուտի ծույլ հայացք և այլն:

Կոմիտասյան գրական կերպավորումների շարքում ուրույն տեղ ունեն նաև Իսաչանյանի բանաստեղծությունները: «Ծաղիկ իմ հեռավոր» ժողովածուում ընդգրկվել է Կոմիտասին նվիրված առաջին բանաստեղծությունը՝ «Եվ նա գնում էր» խորագրով, երկրորդը՝ «Կոմիտաս» վերնագրով, հրապարակվել է «Չանգեզուր» թերթի 1965թ. նոյմբերի 14-ի համարում և չի գետեղվել ժողովածուներում: Երկու գործերն էլ հատկանշվում են գեղարվեստական բարձր արժեքով:

1 Նույն տեղում, էջ 25:
2 Նույն տեղում, էջ 9:

*Եվ նա գնում էր՝ ճակատին քրտինք
և միտքը մարած,
Եվ նա գնում էր հուշի ճամփեքով
մի համատարած:
Եվ նա գնում էր ձեռքերի վրա
և բազուկների,
Եվ նա գնում էր՝ վաստակած ու մեծ
և... թողած թերի¹:*

Չափազանց խորհրդանշական կերպով է պատկերվում հավատի այն ճանապարհը, որ անցել է Կոմիտասը՝ ճակատին քրտինք ու հանճարի լույս, որպես «անաստված վանքի մատաղի գառ»: Բանաստեղծությունը շարահյուսված է ժողովրդական բառ ու բանի ոճավորումով, կոմիտասյան երգի հանգ ու կշռույթով:

*Հողը ճաքել է արևի տապից,
Ե՛վ կոշտացել է, և՛ շատ է քարոտ,
Եզր տնքում է իր լծի տակին,
Քրտինք են խմում ակոս ու արոտ:
... Հոլ արա, եզո, ախպեր ջան, քաշի՛ր,
Արտը քարոտ է, ակոս արա տա՛ր,
Ձիգ տուր, ախպեր ջան, էս լուծն էլ մաշիր,
Մեր եզն արդար է, մեր լուծն անարդար...²*

Մյուս բանաստեղծության մեջ Կոմիտասն «առասպել» է, «խաչքարե-րից խռոված աղոթք», «մրմունջ մեղեդի», «մի բաժակ արցունք», «մի գավաթ կսկիծ», «մի լրիվ տաճար ու սուրբ մատուռ», «ամենահայոց»:

Գրողն ապրում է իր ստեղծագործություններով և կենդանի է այնքան ժամանակ, քանի դեռ կարդում և հիշում են նրա գործերը: Ա.Իսաջանյանի ժառանգության մի սովոր մասը անտիպ է, մեզ հասել է ձեռագիր կամ մեքենագրված հենց հեղինակի կողմից: Իսաջանյանը բանաստեղծություններ գրել է մինչև կյանքի վերջը: Ցավոք, իր բանարվեստն անընդհատ կատարելագործելու, գրական ձևերը թարմացնելու, բյուրեղացնելու մղումը այդպես էլ չհանգեցրեց բանաստեղծական երրորդ ժողովածուի ծննդին: Իսաջանյանի արխիվում պահպանվել են մոտ յոթ տասնյակ անտիպ բանաստեղծություններ, որոնք կարոտ են հրատարակման: Դրանք բավականին բարձարվեստ գործեր են, որոնցում ակնհայտորեն գերակշռում են հոգեզգացական նուրբ ապրումները, փիլիսոփայական խտացումներն ու բանաստեղծական գյուտերը: Իսաջանյանը փորձում է հասնել միջուկին, թարմացնում է մետաֆորներն ու համեմատությունները, լայնացնում բառակերտման ու բառօգտագործման հնարավորությունները, ամբողջովին տեսանելի է դարձնում հոգեհատակը, և ինչպես Սևակն է ասում, կարողանում է «հոգի վառել»: Հաղթահարելով սեփական ցավը՝ բանաստեղծը բացում է համամարդկային ու կենսափիլիսոփայական հարցադրումների շրջանակը:

*Մի անվերջ կաթոց կա աշխարհում,
Սիրում են՝ կաթում է,*

1 Նույն տեղում, էջ 50:

2 Նույն տեղում, էջ 48:

*Տխրում են՝ կաթում է,
Խնդում են՝ կաթում է նորից.-
Սրտերն են կաթում
Եվ դանդաղ սպառում են իրենց.
Մի սրտից ժպիտ է կաթում,
Մի սրտից արցունք է կաթում,
Մի սրտից կաթում է արյուն...
Եվ բոլոր կաթիլներն ընկնում են սրտիս¹:*

Անտիպ բանաստեղծությունները Իսաջանյան բանաստեղծի հասուն պտուղներն են: Խոսքի գեղագիտության հայտանշանները խորանում, խտանում ու պարզվում են: Իր աշխարհընկալումներում բանաստեղծը փորձում է գտնել ու իմաստավորել այն վիճակները, որոնք ընթացք են տալիս կյանքի անցողիկությանն ուղեկցող հոգեբանական արժեքներին:

*Երբ մայրամուտի երակների մեջ
Հոգնած ցավերի մտերմությամբ
Արյունդ այրվի,
Անչար եղիր.-
Աշխարհում
Տերևաթափ է եղել աստվածների,
Տերևաթափ է եղել անաստվածների²:*

Բանաստեղծը խորհրդածության ոլորտ է ներքաշում կյանքում «անչար լինելու» գաղափարը, անչար և սուսկ այն դեպքում, երբ

*... Տունս քանդել են և գնում-գալիս,
Արարի՛չ Աստված,
Դեռ ծառս են լինում
Անթեղված ցավիս հետքերի վրա...³*

Միայնությունը ծանր է, բայց և ինքնաճանաչման, ինքնաբացահայտման, հոգու իմաստությանը, վերերկրային խորհուրդներին հաղորդակցվելու հնարավորություն է: «Աստված, երևացրու ինձ/իմ աչքերը նորից/ և բարձրացրու օրվա /թախիծներից անծայր: -/Աստված, երևացրու ինձ, / երբ թվում էր այնպես, / թե աստված է, մեղա/ նայում իմ աչքերից...»⁴: Նրա մեջ խլրտացող մարդկային հոգեվիճակների տարբեր ծայները գումարվում են՝ ստեղծելով տրամադրության մի համակցություն, որ երբեմն արտաքուստ անբացատրելի ու անորոշ է թվում: Բանաստեղծն անվերջ իր լինելիության, իր գոյության մեջ իմաստ է փնտրում և փորձում երազներով, այսպես ասած, թվացյալով համալրել իր օրերի դատարկությունը: Կենսապաշտությունը ոչ մի պարագայում չի լքում բանաստեղծին: « ... Մեռնելու մասին խոսքեր չգիտեմ»: Սիրո ապրումն էլ արդեն ոչ թե պատանեկան հուզավառություն է, հուշակարոտային տեսիլ, այլ ապրված, մաքրագործված բարձրագույն արժեք, ներդաշնակության հասնելու, հոգու պոռթկումները, չիրականացած իղձերի ցավը կյանքի դառն իրողո-

1 Անտիպ:
2 Անտիպ:
3 Անտիպ:
4 Անտիպ:

ւթյունների հետ հաշտեցնելու ճգնում: Վերջին բանաստեղծություններում Իսա-
ջանյանը լիովին կարողացավ անհատականացնել ստեղծագործական դիմա-
նկարը:

Անտիպ են նաև Իսաջանյանի արձակ ստեղծագործությունները՝ «**Արա Գե-
ղեցիկ և Մարիամ**», «**Սուրճի իմ ծառ**» վիպակները, «**Հասմիկի ճյուղը**» և «**Կա-
նձրևե տղաս**» ծավալուն վեպերը, որոնք հատկանշվում են գեղարվեստական
որոշակի արժեքով: Իսաջանյանը երկար է աշխատել հատկապես «Հասմիկի
ճյուղը» վեպի վրա, որ իր կյանքի գործն է համարել: Օրագրերում անընդհատ
խոսում է վեպի ստեղծման հանգամանքների, ստեղծագործական հուզավառ
ընթացքի մասին: 1981 թվականին նա վեպն ավարտել ու հանձել է տպագրո-
ւթյան, սակայն ժամանակի գրաքննությունը, տուրք տալով խորհրդային
մտակաղապարներին, սխեմատիզմին, խստադատ կարծիք էր տվել և վեպը
վերադարձրել հեղինակին՝ լրամշակման: Գրախոսականներից մեկը ստորա-
գրել է Շ.Մուղևեցյանը, երկրորդը՝ Մ.Թերզյանը: Մուղևեցյանի կարծիքով՝ «Հա-
սմիկի ճյուղը» վեպը հիմնովին վերակառուցելու, վերամշակելու կարիք ունի-
: Ներկա վիճակով այն չի բավարարում հրատարակչական պահանջներ և
չի երաշխավորվում տպագրության»: Թերություններ էին համարվում վեպի
ակնհայտ արժանիքները՝ հարուստ պատկերամտածողությունը, դիպաշարի
բազմաճյուղ գարգացումը, փիլիսոփայական ու հոգեբանական խտացումնե-
րը, ոճակառուցվածքային յուրահատկությունները: Թերզյանը նույնպես վեպի
ինքնատիպությունը, դասական ձևերին անհամապատասխանությունը, փիլի-
սոփայական-հայեցողական բնույթը համարում է ստեղծագործական սխալ
ճանապարհի հետևանք, փորձարարություն: «Այս գործն ավելի շուտ մենախո-
սությունների տրակտատ է, որը ոչ միայն չի կարելի վեպ անվանել, այլև որպես
այդպիսին էլ գեղարվեստական ամբողջություն չի ներկայացնում», -գրում է
Մ.Թերզյանը: Վեպի դիպաշարային առանցքը պտտվում է գլխավոր հերոսի՝
Նկարչի ու Նրա սիրած աղջկա՝ Հասմիկի բարդ, բազմաճյուղ ու բազմագեղո-
ւն հարաբերությունների շուրջ: Իսաջանյանին հորդորում են վեպի համար
ստեղծել կուռ ու կառուցիկ 'սյուժե, կերպարներին պատկերել կոնկրետ իրա-
վիճակներում՝ որոշակի դարձնելով ասելիքը և այլ հերթապահ պահանջներ:
Ցավոք, այդպես որոշվում է վեպի ճակատագիրը: Իսաջանյանն այլևս չի
անդրադառնում «Հասմիկի ճյուղը» վեպին, իսկ երկու տարի չանցած՝ կնքում է
մահկանացուն:

Ալբերտ Իսաջանյանի ստեղծագործության շուրջ անընդհատ կարելի է
ծավալվել: Ավանդույթից սևվելով՝ Նրա գրական հակումները գրքից գիրք նոր,
բազմաշերտ ու բազմախորհուրդ հաստատումներ են արձանագրում: Ամբո-
ղջությամբ Իսաջանյանի պոեզիան 1960-80-ականներին հայ գրական կյանքու-
մ կատարվող խմորումների, վերափոխությունների, խոսքի գեղագիտության
գարգացումների հաջող դրսևորումներից է, որը բանաստեղծի դիմանկարին
հաղորդում է միայն իրեն ներհատուկ գծեր և հայ քնարերգության մեջ ստեղծո-
ւմ ինքնուրույն ու հարազատ մի անկյուն:

ЗНАКОМЫЙ И НЕЗНАКОМЫЙ АЛЬБЕРТ ИСАДЖАНЯН - ТЕЙМИНА МАРУТЯН -

В статье представлен литературный портрет одного из своеобразных лиц Сюникской литературной семьи – поэта, прозаика Альберта Исаджаняна. Многочисленные произведения, написанные в 1960-80гг. в двух поэтических сборниках (“Цветок мой дальний”, “Цветочный мост”) и в одной повести (“Нет, папа, я многое потерял”), которые представлены читателю, все еще неопубликованы: они отличаются определенной художественной ценностью и могут обобщать его своеобразный облик. В этом смысле издание и оценка неопубликованного литературного наследия Исаджаняна остаются актуальными.

Ключевые слова: Альберт Исаджанян, Сюникская литературная семья, поэт, литературный облик, неопубликованное литературное наследие.

FAMILIAR AND UNKNOWN ALBERT ISAJANYAN - TEHMINA MARUTYAN -

The article presents one of the unique faces of the Syunik literary family the literary portrait of the poet, prose writer Albert Isajanyan. Created in 1960-1980 with two collections of poems. («My Flower Far», «Flower Bridge») and One Novel («No, Dad, I’ve Lost a Great One») many of the writings of the writer presented to the reader (prose and verse) are still unpublished, which have a certain artistic value and can complete its unique portrait. In this sense, the publication and appreciation of Isajanyan’s untitled literary heritage remain urgent.

Key words: Albert Isajanyan, Syunik literary family, poet, literary portrait, untitled literary heritage.